ժառանգաւորներով և թէ բացակայ պատրաստի գանուածներով. որոց մասին տրուած ենք տեղեկութիւն, որ սակաւ ժամանակէն զինի սկսի գան, որոնց արդէն պայմանագրերն ղրկըուած են։ Սակայն, ինչպէս ուրիշ անգամ յայտնած ենք, նոյնպէս այսօր ևս կը յայտնենք մեր սիրելի ազգայնոց, որ ծնողաց խնդրանօք և կամ մասնաւոր անձանց միջնորդութեամբ, որ և իցէ մանուկ կամ պատանեակ կարող չէ ժառանգաւոր ընդունուիլ Վարժարանիս մէջ։ Իսկ երբ ներկայ ժառանգաւորներէն յառաջադէմները իրենց ուսման ընթացքը կը լրացնեն, վերստին պայմանագրեր կը ղրկենք վիճակները, և այն ժամանակ պայմանագրութեան թըւոյն համեմատ, կարող ենք նոր աշակերտաց ընդունել, վարժարանիս ժառանգաւորաց քառասնական թիւը անթերի պահպանելով։ Այս Ազդարարութեամբ կ'ուզենք մանաւանդ այն անտեղութեան առաջն առնուլ, որ երբեմն առանց պայմանագրի մանուկներ կամ պատանեակներ կուգան պանդղան դժուարութիւններ քաշելով, զորս սուրբ Աթոռս կստիպուի կրկին ետ դարձնել։ Ի հարկէ սոյն օրինակ դէպքերը մի կողմէն սաստիկ ցաւեն Աթոռոյս համար, բայց միւս կողմէն ևս կարող չեմք արտաքոյ մեր կարողութեան և պայմանագրութեան թուէն եկաւոր անխտրաբար ընդունել։ Երանի թէ շնորհիւ Ազգին սուրբ Աթոռս այն աստիճան բարուքէր իւր նիւթական վիճակը, որ ոչ միայն բազմապատկէր ժառանգաւորաց թիւը, այլ և կարենար առանձին արհեստանոց բանալ այն տեսակ պատանեաց համար, որոնք անգործութենէ ըստիպուած կամ իրենց ծուլութեամբ, կուգան այս տեղ, կամ ուսումնասիրութեան պատրուակաւ և կամ օրական պարէն հայթայթելու նպատակաւ։ Սոցա շատերը շատ և շատ տեսակ նեղութիւններ և տառապանքներ քաշելով կուգան, և երբ սուրբ Աթոռս կստիպուի զինի քանի մը աւուրց ուխտերնին կատարելէն զինի ետ դարձնել, կրկին սուրբ Վանուցս վերայ ծանրանալ, այսինքն ճամբու ծախսը սուրբ Աթոռէն վճարել տալ։ Աւելի ընթերցողաց և տարուէ տարի սուրբ Երուսաղէմ եկող ուխտաւորաց անաչառ քննութեանը կը յանձնեմք այս տեսակ պատահմունքներուն երեսէն սուրբ Աթոռոյս եղած աղքատութիւնն և բրած վնասներն. նա մանաւանդ իւր այսպիսի անտանելի դրամական նեղ վիճակին մէջ, որ սուրբ Աթոռն մեծամեծ նպաստներու կարօտ է այսօր։ Արդարև, մեծ ուրախութի՛ կըլլար Աթոռոյս համար՝ իւր ծոցը դիմած խեղճ զաւակները արհեստագիտութեան մէջ վարժեցնել և նոցա համար ապրուստի դուռը բանալ, որուն ինչ աստիճան օգտակար ըլլալը քաջ գիտեմք, բայց այս մասին ամենէն առաջ հարկաւոր է նիւթական կարողութիւն, որ այն ևս մեր սիրելի Ազգի օժանդակութենէն կախուած է։

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ներկայ ամսոյս սկիզբը՝ չորս օր շարունակ հանդիսաւոր և հրապարակական տօն կատարեց Լատինաց եկեղեցին ի յիշատակ Ճաբոնի երկիրը պատերազմի մէջ ինկնողներուն, զորոնք Հըռովմէական եկեղեցին ի կարգս մարտիրոսաց ընդունած է և որոշած է տարեկան տօնախմբութիւննին կատարել։

—Սոյն ամսոյս մէջ երկու անգամ ճրագալուսութեան հանդէս կատա-

լեց սուրբ քաղաքս․ մին առևտրական, այն է ի յիշատակ տարեդարձի գահակալութեան Վեհափառ Սուլթան Ապտիւլ–Ազիզ կայսեր․ և միւսն Նորատահման, այն է ի յիշատակ ծննդեան Մարգարէին իւրեանց։

—Մարաշցի Գերապ․ Մկրտիչ Արք․ եպիսկոպոսը, որուն ի սուրբ քաղաքս ուխտի գալըն արդէն ծանուցած էինք, ամսոյս 14 ին մեկնեցաւ անկէ իւր հայրենիքն ի Մարաշ այցելութեան երթալու։ Նորին Գերապատուութիւը դիտաւորութիւն ունի կրկին ի սուրբ Աթոռս դառնալու։

—Արմտիք ըստ բաւականին առատ են սուրբ քաղաքիս մէջ։ Ցորենին Քիլէն 18–21 ղուրուշ է ըստ տեսակին։ Թփմին որ առաջ 5 ½ լիտր էր, այս տարի 6 ½ ի վերածեցաւ ըստ որոշման տեղական ժողովոյս․ և կը կշռէ իւր 15 օխայ․ Գարին 9 ղուրուշ է․ ոչխարին միսին լիտրը (900 տրամ) 9 ղուրուշ է․ իսկ այծին 8 ղուրուշ։

—Անցեալ Թուոյն մէջ սխալմամբ գրուած էր Արժ․ Բառնաբաս վարդապետին Դամասկոսի տեսչութենէն փոխուիլը․ որ Թէպէտ ի սուրբ Աթոռս եկած է գործով մի, սակայն կրկին պիտի վերադառնայ իւր պաշտօնին։

## ԱԶԳԱՅԻՆ ՑԱՒԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Ազգային լրագիրք Վսեմ․ Աղաթօն—Գրիգոր Էֆէնտիի մահը գուժեցին 'ի ցաւ սրտի դժբաղդ ազգիս, որ ժամանակէ մը 'ի վեր իւր մեծամեծ անդամոց եւ սիրելի որդւոց անակնկալ կորուստը կ'ողբայ։ Արդարեւ այս կորուստը մեծ և ծանր էր Հայ ազգիս համար․ որոյ դառն ցաւով ողբաց զայն ամէն ճշմարիտ ազգասէր, ողբացինք և մեք միաբանական ուխտս, որ բաց 'ի իւր փառաւոր համբաւէն՝ զինքն 'ի մօտոյ տեսութեամբ ճանչցած, իւր առաքինութեանց պտուղները վայելած և սրտով սիրած էինք․ և ո՛վ է որ միանգամ տեսակցեր է Հանգուցելոյն հետ և չէ սիրեր։ Աղաթօն Գրիգոր Էֆէնտին այն հազուագիւտ անձերէն մին էր, որ իւր քաղցր ու մարդասէր բնաւորութեամբ, վեհանձնութեամբ, խոհական հանճարով և վերջապէս հոգւոյ բոլոր գեղեցիկ յատկութիւններովը իրեն կը ձգէր ամէն պզտուն սրտերը։

Այսպիսի մեծ և անզուգական անձի մը վերջին արժանաւոր պատիւը մատուցին ազգայինք նորա թաղման ափսոսը հանդիսին ներկայ գտնուելով, և դամբանական սրտաշարժ ճառերով հռչակելին իւր ազգասիրական գործերը։

Միաբանական սուրբ ուխտս ալ ճանչնալով իւր նուիրական պարտաւորութիւնը երախտագիտութեամբ փութաց յատկապէս պատուել Մեծապատիւ Հանգուցելոյն քաղցր յիշատակը հոգեւոր և բարեպաշտ հանդէսներով։ Յունիս 22․ շաբաթ գիշեր Քրիստոսի Տեառն մերոյ կենդանատու Սուրբ Գերեզմանին վրայ յատուկ Սուրբ Պատարագ մատուցուեցաւ և հետեւեալ օրը կիւրակէ առաւօտ Գիւտ Տփոյ ըլլալուն առթիւ Տիրամօր Կուսի Սուրբ Գերեզմանին վրայ կատարուած հանդիսաւոր պատարագին մէջ ևս Ամենապատիւ սրբազան Պատրիարք Հայրը յատուկ ծանուցմամբ և հանգուցելոյն ազգասիրական գործոց համառօտ․ բայց սրտաշարժ յիշատակութեամբ խնդրեց ներկայ գըտնուողներէն որ Նորին Վսեմութեան հոգւոյն հանգըստեանը համար սրտեռանդն մաղթանքներ նուիրեն առ Աստուած․ Սուրբ Պատարագի աւարտմանն ալ հոգեհանգստեան պաշտօն կատարեցաւ ջերմեռանդըն պաղատանօք։

## ՊԷՅՐՈՒԹԷՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԼՈՒՐԵՐԸ ԿԸ ՀԱՂՈՐԴԷՆ ՄԵԶ։

«Ամսոյս 11 ին և երեկոյեան ժամը 10 ին Դամասկոսի կուսակալը շատ մը պատուաւոր ուղեկիցներով, և ինքը յատուկ երեք ձիավար կառքով Պէյրութ հասաւ, որուն դիմաւորեցին տեղւոյս ամէն ազգաց երեւելիները․ նոյնպէս տըրաժօն և սոսկական զօրաց ալ բոլոր խումբերը հանդերձ նուագարաններով պատուեցին Նորին բարեգալուստը․ և ի պատիւ յիշեալ կուսակալին 21 հատ ռումբ արձակուելով փառաւոր ընդունելութիւն մի եղաւ։

«Դարձեալ ամսոյս 13 ին առաւօտեան ժամը 11 ին Ասորիոյ շոգենաւը տեղւոյս նաւահանգիստը հասնելով ահագին դղրդում մի եղաւ քաղաքիս մէջ, որուն մէջ կը գտնուէր Լիբանանու ընդհանուր կառավարիչ Ֆրանկօ փաշան։ Նորին վսեմութիւնը պատուելու համար գրեթէ ամէն ազգաց երեւելիները յատուկ նաւակներով

չորեքնուռ գնդային այցելութեան, և միջոց մի այս այցելութիւնները ընդհատելէն վերջ, ժամը 12 ին փառաւոր հանդէսով ցամաք ելաւ, ուր կընդունէին քաղաքին բնակիչներուն մեծ մասը խուռն բազմութեամբ, նոյնպէս վերոյ յիշեալ երկ տեսակ զօրաց խումբերը հանդերձ նուագարաններով։ Եւ նոյն միջոցին 21 հատ ռումբ արձակուեցաւ ի պատիւ յիշեալ կառավարչին, և անտի անմիջապէս կառքը հեծնալով ուղղակի քաղաքին մութասարըֆ փաշային պալատը այցելութիւն մի ընելէն վերջը, Դամասկոսի վսեմ. կուսակալին պալատը գնաց իջաւ »։

## ՊԱՏԻԺ ԲԱՄԲԱՍՈՂԻՆ

Պարոն Բուրդէլը յաւուր միում գնայր զօրօք ի Ճանապարհ. և քահանայ մի հանդիպեցաւ ի Ճանապարհին, իջեալ ի ձիոյն զօրօքն հանդերձ և համբուրեցին զաջ քահանային։ Եւ նայիպն Ալընախ անուն տրտնջեաց պարոնին (զքահանայէն), և պարոնն ծածուկ պատուէր ետ (քահանային) զի մի կնքեսցէն և թաղեսցէն զննջեցեալս նայիպին։ Մեռաւ որդին և ոչ թաղէին. եկն առ պարոնն և ասէ, թէ «Քահանայքն զիմ որդին չեն թաղեր. երթիցուք ես և դու թաղեսցուք»։ Ասէ (Բուրդէլ) թէ «այդ անհնար է»։ Պատասխանեալ ասէ, «Ապա էր այն օրն տրտնջեցեր. երբ որ առանց քահանայի չէմք կարեր լինել, վասն այսորիկ պատուել պարտ է զքահանայն, զի միջնորդ է ընդ Տեառն և ընդ մարդ, թէ մեծ և թէ փոքր, թէ քահանայ և թէ վարդապետ»։

Յառաջգիր . Նձե.

## ՕՐԻՆԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

Վարդապետ մի գանգեցին մօտ իպարոն Բուրդէլի, թէ յոյժ համբերող է. ասաց «գնացէք բերէք ինձ փորձեմ»։ Եկին իդուռն երեկ (եկն), ասէ «Իբրոյ երթ յիմար դու և գէթ»։ Եւ նա լռութեամբ ի բաց գնաց։ Դարձեալ ասէ, «Եկ վարդապետ», և դարձաւ առ փիլսանն։ Զայս երեք անգամ արար՝ և դարձեալ գայր։ Կոչեաց մօտ իւր, և ասաց թէ «Վարդապետ, այդ համբերութիւնդ ուստի՞ ուսար»։ Նա ասաց թէ՝ ի շանէն. զի յորժամ կոչէն՝ գայ, և յորժամ վարեն՝ երթայ. այլա գլուխ շատ բան կայ, որ ի գործ դնել չեմ ածեր։ Եւ պարոնն յոյժ հիացաւ, և պատուեաց զնա ըստ արժանեացն։

Եր. Նձգ։

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### ՂԵՐՈՒԲՆԱ ԵԴԵՍԱՑԻ

Քրիստոնէութեան առաջին դարու և Աբգարու Հայոց թագաւորի ատենադպիր հռչակաւոր հեղինակին անուամբն համառօտ երկասիրութիւն մի է, որոյ մէջ կը պատմուի Աբգարու դարձը և Թադէոսի առաքելոյ քարոզութիւնները, որոյ անունը կը յիշատակէ Խորենացին իւր պատմութեան մէջ։ Առաջին անգամ հանդերձ ծանօթութեամբք ի լոյս ընծայուեցաւ հայերէն բնագիրը սուրբ Աթոռոյս տպարանէն, և մնացեալս ի վաճառ կը դրուի։

### ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ

Համառօտ պատմութիւն մի է ութեւտասներորդ դարու, յորում կը խօսի նոյն ժամանակին հանդիպած պատերազմներուն, Պարսից, Օսմանցւոց Ռուսաց և Աղուանից մէջ եղած քաղաքական դէպքերու վերայ։ Հեղինակն է Եսայի Հասան Ջալալեանց Մետրապոլիտ կամ Կաթուղիկոս տանն Աղուանից։